

# ԳԼՈՒԽ

3

## ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄՆԵՐ

§2

### ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒՄ

### ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

#### Կարողություն, հմտություն

1. Գտեք անհավասարման բնական լուծումները.

$$\text{ա. } \frac{x}{2} - \frac{x}{4} < 10, \quad \text{բ. } \frac{x}{4} + \frac{x}{8} < 5, \quad \text{գ. } \frac{x}{6} - \frac{x}{3} > 7,$$

$$\text{դ. } 0,1x - \frac{x}{5} > -3, \quad \text{ե. } \frac{x}{16} + 0,5x < 7, \quad \text{զ. } -\frac{x}{11} + 0,3x < 8:$$

**Լուծում:** զ. Ունենք  $-\frac{x}{11} + 0,3x < 8$  անհավասարումը: Ձևափոխելով նրա ձախ

մասը՝ կստանանք.  $\frac{23}{110}x < 8$ : Այստեղից՝  $x < \frac{880}{23}$  կամ  $x < 38\frac{6}{23}$ : Ուրեմն՝

$$x \in \{1, 2, \dots, 38\}:$$

## Կիրառում, մոդելավորում

2.  $A$  և  $B$  քաղաքներից, որոնց միջև հեռավորությունը 150 կմ էր, իրար ընդառաջ շարժվեցին երկու ավտոմեքենաներ: Ինչքան ճանապարհ էր անցել առաջին՝  $A$  - ից շարժվող ավտոմեքենան, եթե.
  - ա. առաջինը երկրորդ՝  $B$  -ից շարժվող ավտոմեքենայից 10 կմ-ով ավելի էր անցել, և նրանց միջև 5 կմ -ից պակաս էր.
  - բ. առաջինը երկրորդից 20 կմ պակաս էր անցել, և ևս 15 կիլոմետր անցնելուց հետո նրանք չհանդիպեցին,
  - գ. առաջինը երկրորդից երկու անգամ ավելի էր անցել, և նրանք չէին հանդիպի, եթե անցնեին ևս 24 կմ,
  - դ. առաջինը երկրորդից երեք անգամ պակաս էր անցել, և նրանք հանդիպել էին ու դրանից հետո 10 կիլոմետրից ավելի էին անցել,
  - ե. իրադրությունը գրառեք հանրահաշվորեն և որոշեք առաջին ավտոմեքենայի անցած ճանապարհի հնարավոր որևէ արժեք:
3.  $A$  քաղաքից դեպի  $B$  քաղաք շարժվեց ավտոմեքենան 60 կմ/ժամ հաստատուն արագությամբ: Նույն ժամին  $B$  քաղաքից դեպի  $A$  հաստատուն արագությամբ շարժվեց մյուս ավտոմեքենան, և 5 ժամ դեռ չէր անցել, երբ նրանք հանդիպեցին: Ավտոմեքենաներից որի՞ արագությունն էր ավելի մեծ, եթե քաղաքների միջև հեռավորությունը 600կմ էր: